# Դաս 5. Քարտեզների տեսակները և տարբերությունները: Արդյոք կարևո՞ր են քարտեզները պատմության մեջ

*Այս քարտեզի վրա աշխարհի կենտրոնում Բաբելոնն է, իսկ հյուսիսարևմտյան մասում՝ Արմենիան՝ Հայաստանը, և Ասորիքը: Նրանց շուրջը «դառը գետն» է: Գետից այն կողմ գտնվող 7 կետերը կղզիներ են, ուր անհնար է հասնել: Պարզվում է, որ Հայաստանը ժամանակակից երկրներից միակն է, որը պատկերված է եղել աշխարհի հնագույն քարտեզի վրա:*

*Հայաստանը պատկերված է եղել նաև հնագույն այլ քարտեզներում:*




*Պոմպոնիուս Մելայի քարտեզը (43թ.)*

*Օրինակ՝ Պոմպոնիուս Մելայի քարտեզում պատկերված են Եվրոպան, Ասիան և Աֆրիկան, իսկ Արմենիա անվանումը հանդիպում է քարտեզի հյուսիսարևմտյան մասում:*